23.բ.	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) դրոշմակնիքը	պարտադիր	պարտադիր վճարման պահանջագիրը վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությանը թղթային եղանակով ներկայացված լինելու դեպքում	
23.գ	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից կատարման ամսաթիվը, ժամը, թույլ	պարտադիր	պարտադիր վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից պարտադիր նշվում է պահանջագրի կատարման ամսաթիվը, ժամը, թույլ	
24.ա.	շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է վճարման պահանջագիրը շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպությանը ներկայացվելու դեպքում, որտեղ աշխատակցի ստորագրությունը դրվում է թղթային եղանակով ներկայացված պահանջագրի վրա	
24.բ.	շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) դրոշմակնիքը	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է վճարման պահանջագիրը վերջինիս ներկայացվելու դեպքում, որտեղ դրոշմակնիքը դրվում է թղթային եղանակով ներկայացված պահանջագրի վրա	
24.գ	շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության ամսաթիվը, ժամը, թույլ	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է վճարման պահանջագիրը վերջինիս ներկայացվելու դեպքում, որտեղ սույն տվյալները դրվում են թղթային եղանակով ներկայացված պահանջագրի վրա	

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

N \_\_\_\_\_

ք. \_\_\_\_\_

«\_\_\_» \_\_\_\_\_ 20 թ.

«\_\_\_\_\_», ի դեմս \_\_\_\_\_ -ի, որը գործում է \_\_\_\_\_ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և \_\_\_\_\_-ն, ի դեմս տնօրեն \_\_\_\_\_-ի, որը գործում է \_\_\_\_\_ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է՝ **Նորք-Մարաշ վարչական շրջանի կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքների** կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ նախագծող՝

1) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմում է օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնում է կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնում է աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում է հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

### 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է \_\_\_\_\_ ( \_\_\_\_\_ տարեքով \_\_\_\_\_ ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:<sup>19</sup>

<sup>19</sup> Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:<sup>23</sup> Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով:<sup>24</sup> Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համարեղ գործունեության (կոնստրուկցիոն) պայմանագիր կնքելու միջոցով:<sup>25</sup> Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ փոժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: **Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի (համաձայնագրի) վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:**

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի **5 (հինգ)** տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի **0.19 (զրո ամբողջ տասնինը հարյուրերորդական)** տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի,

*ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները՝ բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*



ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագրի կնքելու միջոցով.

1) Կատարողը պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:<sup>23</sup>

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:<sup>24</sup>

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5

<sup>23</sup> Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում ենթակապալի պայմանագրի կնքելու միջոցով:<sup>24</sup> Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագրի կնքելու միջոցով:<sup>25</sup> Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապայպիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տրամանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

<sup>24</sup> Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագրի կնքելու միջոցով:<sup>25</sup> Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապայպիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տրամանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին: 7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է \_\_\_\_\_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագրի կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:<sup>25</sup>

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

(ստորագրություն)

(ստորագրություն)

Կ.Տ.

Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

<sup>25</sup> Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ փուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:



**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\***

«Ղ դրամ

0	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Ձ/Մ	միավոր գինը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	ժամկետը
1	71241200/1043	<p>1. Նախագծերը մշակել գործող նորմերի պահանջների համաձայն</p> <p>2. Շինարարական հրապարակը կազմակերպել համաձայն Երևանի ավագանու 16.03.2012թ. №405Ն որոշման սահմանված պայմաններով:</p> <p>3. Նախագծերը ներկայացնել 5 օրինակից,</p> <p>4. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել պատվիրատուի հետ</p> <p>5. Նախագծերը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով</p> <p><b>Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի հենապատի վերանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռք բերման</b></p> <p><b>Նորքի 7-րդ փողոցից դեպի 11-րդ փողոց բարձրացող աստիճանների նախագիծ</b></p>	դրամ			1	Նորք-մարաշ 7-րդ և 11-րդ փողոց	Պայմանագիրը /համաձայնագիրը/ ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրացուցային օրը ներառյալ
		<p>1. Գազմել տեխնիկական եզրակացություն հաստատության փաստացի իրավիճակի մասին</p> <p>Տեխնիկական եզրակացությունում արտահայտել.</p> <p>·Գոյություն ունեցող տարածքում առկա հենապատի վիճակը.</p>						

		<p>. Բետոնե հենապատի քայքայված հատվածների քանդման աշխատանքների և հարակից տարածքում ինժեներական գծերի՝ գազատարի, էլեկտրալարերի և ջրատար խողովակների առկայության մասին տեղեկատվություն.</p> <p>. Ամրանային ցանցի տեղադրում և կառուցման աշխատանքների ծավալները և օգտագործվող նյութերը.</p> <p>. Նոր բետոնե հենապատի պատրաստում, մետաղական ճաղաշարի տեղադրում և նկարգարդում</p> <p>. Շահագործման ընթացում իրականացված բոլոր տիպի լրացումների և փոփոխությունների առաջարկություն:</p> <p><b>2.Տեխնիկական եզրակացության արդյունքներին համաձայն ներկայացնել</b></p> <p>ա/ Հենապատի վերակառուցման էքզիզ-նախագիծ նախնական համաձայնության, որը պետք է համահունչ լինի հարակից միջավայրի հետ:</p> <p>բ/ Աշխատանքների թերությունների ակտ՝ նախնական համաձայնության:</p> <p>գ/ Առաջադրանքի համաձայն կազմել նախագծա-նախահաշվային աշխատանքների փաստաթղթեր:</p> <p>դ/ Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն:</p> <p><b>3.Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել Պատվիրատուի հետ:</b></p> <p><b>4.Նախագծերը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով:</b></p> <p><b>5. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել նաև ուսերեն տարբերակով</b></p> <p><b>6. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել 5 օրինակից</b></p> <p><b>7. Աշխատանքների դիմաց վճարումը կատարվելու է փորձաքննության դրական եզրակացություն տրամադրվելուց հետո</b></p>					
2	71241200/1044	<p>1, Նախագծերը մշակել գործող նորմերի պահանջների համաձայն</p> <p>2. Շինարարական հրապարակը կազմակերպել համաձայն Երևանի ավագանու 16.03.2012թ. №405Ն որոշման սահմանված պայմաններով:</p> <p>3. Նախագծերը ներկայացնել 5 օրինակից,</p> <p>4. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել պատվիրատուի հետ</p> <p>5. Նախագծերը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով</p>					

	<p><b>Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի 9-րդ փողոցից դեպի 11-րդ փողոց / թիվ 157 դպրոցի հարևանությամբ/ բարձրացող աստիճանների նախագիծ</b></p> <p><b>1. Կազմել տեխնիկական եզրակացություն հաստատության փաստացի իրավիճակի մասին</b> Տեխնիկական եզրակացությունում արտահայտել.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Հիմնանորոգվելիք տարածքների առկա վիճակը:</li> <li>• Հարակից տարածքում ռոտզման ցանցի կառուցման `պոմպի տեղադրմամբ, արտաքին լուսավորության ցանցի կառուցման, տարածքի լանդշաֆթային դիզայնի իրականացման, հետիոտն անցումիների կառուցման, նստարանների և աղբամանների տեղադրման աշխատանքները</li> <li>• Հարակից կանաչապատ տարածքի պահպանման մասին տեղեկատվությունը:</li> <li>• Բարեկարգման աշխատանքների ծավալների և օգտագործման նյութերի մասին առաջարկություններ:</li> <li>• Շահագործման ընթացքում իրականացված բոլոր տիպի լրացումների և փոփոխությունների առաջարկություններ:</li> </ul> <p><b>2. Տեխնիկական եզրակացության արդյունքներին համաձայն ներկայացնել</b> ա/ Այգու բարեկարգման և հիմնանորոգման աշխատանքների էքզիզ-նախագիծ` նախնական համաձայնության: բ/ Այգու բարեկարգման և հիմնանորոգման աշխատանքների թերությունների ակտ` նախնական համաձայնության: գ/ Առաջադրանքի համաձայն կազմել այգու բարեկարգման և հիմնանորոգման նախագծա-նախահաշվային աշխատանքների փաստաթղթեր: դ/ Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն: ե/ Նախագծերը ներկայացնել 5 օրինակից` հայերեն և ռուսերեն տարբերակով սահմանված կարգով փորձաքննություն անցած:</p> <p><b>4.Նախագծերը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով:</b> <b>5, Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել նաև ռուսերեն տարբերակով</b> <b>6, Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել 5 օրինակից</b> <b>7, Աշխատանքների դիմաց վճարումը կատարվելու է փորձաքննության դրական եզրակացություն տրամադրվելուց հետո</b></p>	<p>դրամ</p>		<p>1</p>	<p>Նորք-մարաշ 9-րդ և 11-րդ փողոց</p>	<p>Պայմանագիրը /համաձայնագիրը/ ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրացուցային օրը ներառյալ</p>
--	---	-------------	--	----------	--------------------------------------	--

3	71241200/1045	<p>1. Նախագծերը մշակել գործող նորմերի պահանջների համաձայն</p> <p>2. Շինարարական հրապարակը կազմակերպել համաձայն Երևանի ավագանու 16.03.2012թ. №405Ն որոշման սահմանված պայմաններով:</p> <p>3. Նախագծերը ներկայացնել 5 օրինակից.</p> <p>4. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել պատվիրատուի հետ</p> <p>5. Նախագծերը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով</p>	դրամ		1	Նորք-մարաշ 11-րդ և 13-րդ փողոց	Պայմանագիրը /համաձայնագիրը/ ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրացուցային օրը ներառյալ
<p><b>Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի 11-րդ փողոցից դեպի 13-րդ փողոց բարձրացող աստիճանների նախագիծ</b></p>							
		<p><b>1. Կազմել տեխնիկական եզրակացություն հաստատության փաստացի իրավիճակի մասին</b> Տեխնիկական եզրակացությունում արտահայտել.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Հիմնանորոգվելիք տարածքների առկա վիճակը:</li> <li>• Հարակից տարածքում ռոռզման ցանցի կառուցման՝ պոմպի տեղադրմամբ, արտաքին լուսավորության ցանցի կառուցման, տարածքի լանդշաֆթային դիզայնի իրականացման, հետիոտն անցումիների կառուցման, նստարանների և աղբամանների տեղադրման աշխատանքները</li> <li>• Հարակից կանաչապատ տարածքի պահպանման մասին տեղեկատվությունը:</li> <li>• Բարեկարգման աշխատանքների ծավալների և օգտագործման նյութերի մասին առաջարկություններ:</li> <li>• Շահագործման ընթացքում իրականացված բոլոր տիպի լրացումների և փոփոխությունների առաջարկություններ:</li> </ul> <p><b>2. Տեխնիկական եզրակացության արդյունքներին համաձայն ներկայացնել</b> ա/ Այգու բարեկարգման և հիմնանորոգման աշխատանքների էքզիզ-նախագիծ՝ նախնական համաձայնության: բ/ Այգու բարեկարգման և հիմնանորոգման աշխատանքների թերությունների ակտ՝ նախնական համաձայնության:</p>					

		<p>գ/ Առաջադրանքի համաձայն կազմել այգու բարեկարգման և հիմնանորոգման նախագծա-նախահաշվային աշխատանքների փաստաթղթեր:</p> <p>դ/ Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն:</p> <p>ե/ Նախագծերը ներկայացնել 5 օրինակից՝ հայերեն և ռուսերեն տարբերակով սահմանված կարգով փորձաքննություն անցած:</p> <p><b>4. Նախագծերը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով:</b></p> <p><b>5. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել նաև ռուսերեն տարբերակով</b></p> <p><b>6. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել 5 օրինակից</b></p> <p><b>7. Աշխատանքների դիմաց վճարումը կատարվելու է փորձաքննության դրական եզրակացություն տրամադրվելուց հետո</b></p>					
4	71241200/1046	<p>1. Նախագծերը մշակել գործող նորմերի պահանջների համաձայն</p> <p>2. Շինարարական հրապարակը կազմակերպել համաձայն Երևանի ավագանու 16.03.2012թ. №405Ն որոշման սահմանված պայմաններով:</p> <p>3. Նախագծերը ներկայացնել 5 օրինակից,</p> <p>4. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել պատվիրատուի հետ</p> <p>5. Նախագծերը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով</p> <p><b>Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի նորք 105 հասցեի հարակից տարածքում հենապատի կառուցման նախագիծ</b></p> <p>1. Կազմել տեխնիկական եզրակացություն հաստատության փաստացի իրավիճակի մասին</p> <p>Տեխնիկական եզրակացությունում արտահայտել.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Հիմնանորոգվելիք տարածքների առկա վիճակը:</li> </ul>	դրամ	1	նորք-մարաշ վարչական շրջան	Պայմանագիրը /համաձայնագիրը/ ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրացուցային օրը ներառյալ	



		<ul style="list-style-type: none"> <li>• Հարակից տարածքում ռոռզման ցանցի կառուցման` պոմպի տեղադրմամբ, արտաքին լուսավորության ցանցի կառուցման, տարածքի լանդշաֆթային դիզայնի իրականացման, հետիոտն անցումիների կառուցման, նստարանների և աղբամանների տեղադրման աշխատանքները</li> <li>• Հարակից կանաչապատ տարածքի պահպանման մասին տեղեկատվությունը:</li> <li>• Բարեկարգման աշխատանքների ծավալների և օգտագործման նյութերի մասին առաջարկություններ:</li> <li>• Շահագործման ընթացքում իրականացված բոլոր տիպի լրացումների և փոփոխությունների առաջարկություններ:</li> </ul> <p><b>2. Տեխնիկական եզրակացության արդյունքներին համաձայն ներկայացնել</b></p> <p>ա/ Այգու բարեկարգման և հիմնանորոգման աշխատանքների էքսիզ-նախագիծ` նախնական համաձայնության:</p> <p>բ/ Այգու բարեկարգման և հիմնանորոգման աշխատանքների թերությունների ակտ` նախնական համաձայնության:</p> <p>գ/ Առաջադրանքի համաձայն կազմել այգու բարեկարգման և հիմնանորոգման նախագծա-նախահաշվային աշխատանքների փաստաթղթեր:</p> <p>դ/ Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն:</p> <p>ե/ Նախագծերը ներկայացնել 5 օրինակից` հայերեն և ռուսերեն տարբերակով սահմանված կարգով փորձաքննություն անցած:</p> <p><b>4.Նախագծերը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով:</b></p> <p><b>5. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել նաև ռուսերեն տարբերակով</b></p> <p><b>6. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել 5 օրինակից</b></p> <p><b>7. Աշխատանքների դիմաց վճարումը կատարվելու է փորձաքննության դրական եզրակացություն տրամադրվելուց հետո</b></p>						
5	71241200/1047	<p>1. Նախագծերը մշակել գործող նորմերի պահանջների համաձայն</p> <p>2. Շինարարական հրապարակը կազմակերպել համաձայն Երևանի ավագանու 16.03.2012թ. №405Ն որոշման սահմանված պայմաններով:</p> <p>3. Նախագծերը ներկայացնել 5 օրինակից,</p> <p>4. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել պատվիրատուի հետ</p> <p>5. Նախագծերը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով</p>						

	<p><b>Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի 8-րդ փողոցում աստիճանների նախագիծ</b></p> <p><b>1. Կազմել տեխնիկական եզրակացություն հաստատության փաստացի իրավիճակի մասին</b> Տեխնիկական եզրակացությունում արտահայտել:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Հիմնանորոգվելիք տարածքների առկա վիճակը:</li> <li>• Հարակից տարածքում ռոտզման ցանցի կառուցման՝ պոմպի տեղադրմամբ, արտաքին լուսավորության ցանցի կառուցման, տարածքի լանդշաֆթային դիզայնի իրականացման, հետիոտն անցումիների կառուցման, նստարանների և աղբամանների տեղադրման աշխատանքները</li> <li>• Հարակից կանաչապատ տարածքի պահպանման մասին տեղեկատվությունը:</li> <li>• Բարեկարգման աշխատանքների ծավալների և օգտագործման նյութերի մասին առաջարկություններ:</li> <li>• Շահագործման ընթացքում իրականացված բոլոր տիպի լրացումների և փոփոխությունների առաջարկություններ:</li> </ul> <p><b>2. Տեխնիկական եզրակացության արդյունքներին համաձայն ներկայացնել</b> ա/ Այգու բարեկարգման և հիմնանորոգման աշխատանքների էքզիզ-նախագիծ՝ նախնական համաձայնության: բ/ Այգու բարեկարգման և հիմնանորոգման աշխատանքների թերությունների ակտ՝ նախնական համաձայնության: գ/ Առաջադրանքի համաձայն կազմել այգու բարեկարգման և հիմնանորոգման նախագծա-նախահաշվային աշխատանքների փաստաթղթեր: դ/ Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն: ե/ Նախագծերը ներկայացնել 5 օրինակից՝ հայերեն և ռուսերեն տարբերակով սահմանված կարգով փորձաքննություն անցած:</p> <p><b>4.Նախագծերը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով:</b> <b>5. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել նաև ռուսերեն տարբերակով</b> <b>6. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել 5 օրինակից</b> <b>7. Աշխատանքների դիմաց վճարումը կատարվելու է փորձաքննության դրական եզրակացություն տրամադրվելուց հետո</b></p>	<p><b>դրամ</b></p>		<p>1</p>	<p><b>Նորք-մարաշ 8-րդ փողոց</b></p>	<p><b>Պայմանագիրը /համաձայնագիրը/ ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրացուցային օրը ներառյալ</b></p>
--	---	--------------------	--	----------	-------------------------------------	---

6	71241200/1048	<p>1. Նախագծերը մշակել գործող նորմերի պահանջների համաձայն</p> <p>2. Շինարարական հրապարակը կազմակերպել համաձայն Երևանի ավագանու 16.03.2012թ. №405Ն որոշման սահմանված պայմաններով:</p> <p>3. Նախագծերը ներկայացնել 5 օրինակից,</p> <p>4. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել պատվիրատուի հետ</p> <p>5. Նախագծերը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով</p> <p><b>Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի 9-րդ փողոցից դեպի 7-րդ փողոց տանող ճանապարհահատվածի աստիճանների նախագիծ</b></p>	դրամ		1	նորք-մարաշ վարչական շրջան	Պայմանագիրը /համաձայնագիրը/ ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրացուցային օրը ներառյալ
		<p><b>1. Կազմել տեխնիկական եզրակացություն հաստատության փաստացի իրավիճակի մասին</b></p> <p>Տեխնիկական եզրակացությունում արտահայտել.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Հիմնանորոգվելիք տարածքների առկա վիճակը:</li> <li>• Հարակից տարածքում ռոռզման ցանցի կառուցման `պլանայի տեղադրմամբ, արտաքին լուսավորության ցանցի կառուցման, տարածքի լանդշաֆթային դիզայնի իրականացման, հետիոտն անցումիների կառուցման, նստարանների և աղբամանների տեղադրման աշխատանքները</li> <li>• Հարակից կանաչապատ տարածքի պահպանման մասին տեղեկատվությունը:</li> <li>• Բարեկարգման աշխատանքների ծավալների և օգտագործման նյութերի մասին առաջարկություններ:</li> <li>• Շահագործման ընթացքում իրականացված բոլոր տիպի լրացումների և փոփոխությունների առաջարկություններ:</li> </ul> <p><b>2. Տեխնիկական եզրակացության արդյունքներին համաձայն ներկայացնել</b></p> <p>ա/ Այգու բարեկարգման և հիմնանորոգման աշխատանքների էքզիզ-նախագիծ ` նախնական համաձայնության:</p> <p>բ/ Այգու բարեկարգման և հիմնանորոգման աշխատանքների թերությունների ակտ ` նախնական համաձայնության:</p> <p>գ/ Առաջադրանքի համաձայն կազմել այգու բարեկարգման և հիմնանորոգման նախագծա-նախահաշվային աշխատանքների փաստաթղթեր:</p> <p>դ/ Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն:</p>					

ե/ Նախագծերը ներկայացնել 5 օրինակից՝ հայերեն և ռուսերեն տարբերակով սահմանված կարգով փորձաքննություն անցած:

4. Նախագծերը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով:

5. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել նաև ռուսերեն տարբերակով

6. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել 5 օրինակից

7. Աշխատանքների դիմաց վճարումը կատարվելու է փորձաքննության դրական եզրակացություն ստանադրվելուց հետո

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ԿԱՏԱՐՈՂ**

-----  
/ստորագրություն/  
Կ.Տ

-----  
/ստորագրություն/  
Կ.Տ

Պայմանագրի կողմ  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
գտնվելու վայրը \_\_\_\_\_  
հհ \_\_\_\_\_  
հվհհ \_\_\_\_\_

Պատվիրատու  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
գտնվելու վայրը \_\_\_\_\_  
հհ \_\_\_\_\_  
հվհհ \_\_\_\_\_

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**  
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**  
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«        » «        » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «        » «        » 20 թ.

Պայմանագրի համարը՝ \_\_\_\_\_

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «        » «        » 20 թ. դուրս գրված N \_\_\_\_\_ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

\_\_\_\_\_  
ստորագրություն  
\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

\_\_\_\_\_  
ստորագրություն  
\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
Կ.Տ.

ԱԿՏ N  
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ \_\_\_\_\_-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և \_\_\_\_\_-ի  
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. \_\_\_\_\_-ին կնքված N \_\_\_\_\_  
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. \_\_\_\_\_-ին հանձնման-ընդունման նպատակով  
Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

\_\_\_\_\_  
ազգանուն, անուն

\_\_\_\_\_  
ստորագրություն

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

\_\_\_\_\_  
ազգանուն, անուն

\_\_\_\_\_  
ստորագրություն